

# «ՈԵՆԵՍՍ» ՓԲԸ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2009թ. I-ին եռամսյակ

Հաշվապահական հաշվառումը «ՈԵՆԵՍՍ» ՓԲԸ-ում վարվել է ՀՀ Կենտրոնական բանկի խորհուրդի 2008 թվականի ապրիլի 8-ի թիվ 116-Ն Որոշումով հաստատված Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանին, Ներդրումային ընկերության կողմից հաստատված հաշվապահական հաշվառման քաղաքականությանը համապատասխան:

Ընկերության 2009թ. հունվարի 1-ից մարտի 31-ը հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունները կազմվել և իրականացվել են համաձայն «Հաշվապահական Հաշվառման մասին» ՀՀ օրենքի, հաշվապահական հաշվառման ստանդարտների և գերատեսչական նորմատիվ այլ իրավական ակտերի:

Ընկերության ակտիվները, պարտավորությունները, սեփական կապիտալը, հաշվեկշռային հաշիվներում հաշվառելու նպատակով, Ընկերության դեկավարությունն ընտրում և կիրառում է այնպիսի հաշվապահական հաշվառման քաղաքականություն, որ ֆինանսական հաշվետվությունների փաթեթը և նրանցում պարունակվող տեղեկատվությունը պարտադիր բավարարեն կիրառվող յուրաքանչյուր ստանդարտի բոլոր պահանջներին և հաշվապահական հաշվառումը կարգավորող այլ ակտերին:

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը պետք է բավարարի հաշվապահական հաշվառման վարման և ֆինանսական հաշվետվությունների կազմման հետևյալ սկզբունքներին.

*անընդհատության սկզբունք՝* Ընկերությունը շարունակելու է իր գործունեությունը տեսանելի ապագայում և միտում չունի լուծարվելու կամ կրճատելու իր գործունեության ծավալները:

*արժանահավատության սկզբունք՝* ֆինանսական հաշվետվություններում ներկայացվող տեղեկատվությունը պետք է ճշմարիտ ներկայացնի Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև արտացոլի՝

ա) ոչ միայն իրավական կողմը, այլ նաև դեպքերի և գործառնությունների տնտեսական բովանդակությունը,

բ) լինի չեղոք, զերծ մնա կանխակալությունից,

գ) լինի հաշվենկատ,

դ) լինի ամբողջական բոլոր էական դրսերումներում:

*հաշվեգրման սկզբունք՝ տնտեսական գործառնությունների և դեպքերի արդյունքները ճանաչվում և հաշվապահական հաշվառման մեջ գրանցվում են այն ժամանանակ, երբ դրանք տեղի են ունեցել, անկախ դրանց հետ կապված դրամական միջոցների վճարման կամ ստացման ժամկետից, և արտացոլվում են այն ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվություններում, որոնց դրանք վերաբերում են,*

*հասկանալիության սկզբունք՝ ֆինանսական հաշվետվություններում պարունակվող տեղեկատվությունը պետք է հասկանալի լինի օգտագործողներին,*

*էականության և միասնականության սկզբունք՝ ֆինանսական հաշվետվություններում յուրաքանչյուր էական հոդված պետք է ներակայացվի առանձին, իսկ ոչ էական հոդվածները՝ միավորված,*

*համադրելիության սկզբունք՝ տարբեր ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները պետք է համադրելի լինեն:*

«ՈԵՆԵՍՍ» ՓԲԸ-ի կողմից ընտրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիման վրա կազմված ֆինանսական հաշվետվությունները բավարարում են ՀՀ հաշվապահական հաշվառման ստանդարտների և «ՀՀ հաշվապահական հաշվառման մասին» օրենքի պահանջներին:

Ֆինանսական հաշվետվություններում ներկայացված տեղեկատվությունը պարունակում է բավարար չափով ինֆորմացիա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություն տեղի չի ունեցել:

Գործադիր տնօրեն՝

Վ.Մարոյան

Գլխ.հաշվապահ՝

Ն.Մարգարյան